

# ՀԱՎԵԼՎԱԾ

**Ավագ Ա. Հարությունյան**

*Պարմ. գիյր. թեկնածու*

## **ԳԱՐԵԳԻՆ ՆԺՊԵՇԸ ԵՎ**

## **ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍՎՄԱՐՏԸ**

Հետադարձ հայացք 100-ամյա հեռավորությունից\*

**Բանալի բառեր** – Գարեգին Նժդեհ, Լեռնահայաստան, Մեծ Բրիտանիա, Արսեն Շահնազյան, Դավիթբեկյան վաշտեր, Կապարգողթ, Փետրվարյան ապստամբություն, Ռիզայի բանակցություններ, Կարմիր բանակ, ժողովրդական առաջնորդ:

### Մուտք

1919–1921 թթ. Սյունիքը գտնվում էր աշխարհաքաղաքական չարաղետ խաղերի և ներքին խլրտումների կործանարար ընթացքի մեջ, որին դիմակայելու համար նախևառաջ անհրաժեշտ եղավ համախմբում՝ կարող մարդկանց ղեկավարությամբ:

Համախմբման առաջնորդությունը ստանձնեց Գարեգին Նժդեհը, ով հետագայում այդ օրերի մասին գրում էր. «Զինուորը, ամբողջ ժողովուրդը սիրել ու հարգել է իր ղեկավարներին, որովհետև տեսել է, որ նոյն չարքաշ ու պարզ կեանքով են ապրել վերջիններս: Հրամանատարութեան վարձատրութիւնն եղել է գուտ բարոյական՝ ժողովրդի եւ զինուորութեան սէր: Ոչ մի անելորդ պաշտօն, որը կապուած չէ եղել տքնութեան եւ ստեղծագործ աշխատանքի հետ, ոչ մի պաշտօնեայ, որը չի վայելել ժողովրդի վստահութիւնը: Քաղաքական խիստ խաղաձեւող հոսանքներ չեն եղել: Կռուի հրամանը ընդունում էր որպէս քէֆի ու խրախճանքի հրաման, շարժում էին մի չտեսնուած խանդավառութեամբ: Կռուի դուրս գալ՝ յաղթել էր նշանակում»<sup>1</sup>:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2021:

1 **Հարությունյան Ա.**, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Եր., 2004, էջ 163:

Լեռնահայաստանի հերոսամարտից մեկ դար անց՝ Սյունիքի շուրջ ներկա ռազմաքաղաքական զարգացումների պայմաններում 20-րդ դարակազմի պատմության հերոսական դրվագների բացահայտումը և այդ համապատկերում Գ. Նժդեհի դերակատարման գնահատումը նպատակ ունի վերհանելու ողջ ճշմարտությունը, քանզի «ամէն բան մեռնում է աշխարհում, բացի ճշմարտությունից»<sup>2</sup>:

## 1. Բրիտանական աշխարհաքաղաքականության որոգայթները

Առաջին աշխարհամարտից հետո Սյունիք-Արցախում իր հակահայ քաղաքականությամբ առանձնակի աչքի ընկավ Մեծ Բրիտանիան: Արդեն 1918 թ. նոյեմբերի 17-ին Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը նշանակվեց Բաքվի գեներալ-նահանգապետ: Այդ շրջանում բրիտանացիները տարածաշրջանում հետապնդում էին հետևյալ նպատակը՝ ձևավորել ուժեղ մահմեդական Ադրբեջան՝ Սյունիքով և Արցախով՝ ՀՀ-ին ստիպելով հրաժարվել նշյալ մարզերից՝ ի հաշիվ Կարսի մարզի ու խոստացվող արևմտահայ նահանգների: Դրա սպացույցները բազմաթիվ են. օրինակ՝ Սյունիքից Արցախ արշավելու պատրաստ զորավար Անդրանիկին նույն Թոմսոնը նամակով սպառնում էր, որ հակառակ դեպքում միջազգային հարթակներում կվտանգվի Հայկական հարցի լուծման գործընթացը<sup>3</sup>: Նկատի ունենալով նման անթաքույց սպառնալիքը և թուրքական զորքերի հեռացումը՝ Անդրանիկը ընդհատեց Շուշիի արշավանքը: Այսինքն՝ տվյալ պատմաշրջանում բրիտանական վերջնագիրը ձերբազատեց Ադրբեջանին Արցախից զրկվելու սպառնալիքից:

1919 թ. հունվարի 15-ին բրիտանական հրամանատարությունը Արցախի և Սյունիքի բնակչությանը տեղեկացրեց իր աջակցությունը վայելող ադրբեջանական գեներալ-նահանգապետ Սուլթանովի նշանակման մասին<sup>4</sup>, որին ժամանակակիցները ոչ առանց հիմքի թուրքական լրտես էին համարում: Սակայն որպես հակաքայլ՝ ՀՀ կառավարությունը հունվարի 21-ին Արցախ-Սյունիքի պետական կոմիսար նշանակեց Արսեն Շահմազյանին<sup>5</sup>: Եվ միայն Սուլթանովի նշանակման դեմ ՀՀ արտգործնախարար Սիրական Տիգրանյանի 1919 թ. մարտի 21-ի բողոքից<sup>6</sup> հետո գեներալ Թոմսոնը մարտի 25-ին ժամանեց Երևան և ստիպված խոստացավ, որ Սյունիքը կղեկավարի տեղի Ազգային խորհուրդը<sup>7</sup>:

2 Նույն տեղում, էջ 101:

3 Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 370, ց. 1, գ. 50, թ. 91:

4 Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 245, թ. 100:

5 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 47, թ. 9:

6 Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 63-64:

7 Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 231, թ. 51:

Արդեն 1919 թ. մարտի 31 – ապրիլի 2-ին գումարված Զանգեզուրյան համագումարը Սյունիքը ՀՀ-ին միացնելու որոշում ընդունեց<sup>8</sup>: Այդուհանդերձ, հետախուզական այցով Գորիս մեկնած անգլիացի սպա Թաունսենդը զեկուցում էր, որ Ա. Շահնազյանը ընդդիմանում է բրիտանական քաղաքականությանն ու դրսևորում է ՀՀ-ին միանալու դիրքորոշում:<sup>9</sup> Չբավարարվելով այս ամենով՝ Շուշիում անգլիական ներկայացուցիչ մայոր Մոնկ-Մենսոնը մայիսի 2-ին Գորիսում կրկին պահանջեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և հեռացնել Ա. Շահնազյանին, ինչը սյունեցիները մերժեցին<sup>10</sup>: Իսկ արդեն մայիսի 3-ին Թիֆլիսում ՀՀ վարչապետ Ա. Խատիսյանին նշյալ պահանջները ներկայացրեց նաև գեներալ Թոմսոնը (ուշագրավ է, որ դեպի Նախիջևան բրիտանական առաջխաղացումը նրանք պայմանավորում էին Ա. Շահնազյանի հեռացմամբ, անգամ սպառնացին վերջինիս ձերբակալել)<sup>11</sup>:

Սյունիքից ՀՀ կառավարության ներկայացուցիչների հեռացման (ըստ էության, մարզը Ադրբեջանին հպատակեցնելու) բրիտանական քաղաքականությունը հետագայում ևս հետևողականորեն շարունակվեց Թոմսոնի հաջորդներ Շատելվորտի, Կորիի և այլոց կողմից՝ հանդիպելով ՀՀ կառավարության մերժմանը: Ի պատասխան այս մերժման՝ անգլիացիների հրահանգով և աջակցությամբ հունիս-հուլիս ամիսներին ադրբեջանցիները հարձակում ձեռնարկեցին Արցախի, ապա Սյունիքի դեմ: Այս ուղղությամբ Ամերիկյան գերագույն կոմիսար Հասկելի ջանքերը ևս արդյունք չտվեցին, և Սյունիքի հարցը չլուծվեց, իսկ ադրբեջանական հարձակումը կանխվեց նախ սյունեցիների հաջող դիմագրավումով, ապա նաև ՀՀ կառավարության ցուցաբերած վճռականության շնորհիվ<sup>12</sup>: Անարդյունավետ եղավ նաև անգլո-ամերիկյան միջամտությամբ կայացած 1919 թ. նոյեմբերի 23-ի հայ-ադրբեջանական զինադադարը<sup>13</sup>, որը հաջորդեց Սյունիքում Ադրբեջանի բանակի նոյեմբերյան խայտառակ պարտությանը: Սյունեցիների ռազմական հաջողություններից սարսափած՝ Թիֆլիսում անգլիական բարձրագույն կոմիսար Ուորդոքը ՀՀ կառավարությունից պահանջեց դադարեցնել մարտերը՝ սպառնալով բողոքել Փարիզի համաժողովին<sup>14</sup>:

Անշուշտ, բրիտանական քաղաքականության նպատակը առաջնահերթորեն ու գերազանցապես հակառուսական հեռահար ծրագրերի իրականացումն էր: Այդ համատեքստում նրանց շահերից էր բխում միաժամանակ

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 2, ֆ. 11, թ. 1:  
 9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 15-16:  
 10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 77, թ. 169:  
 11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 51-52:  
 12 Օրինակ տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 128-129:  
 13 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35-36:  
 14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 110:

Կարսի մարզով ՀՀ տարածքի ընդլայնումը և Սյունիք-Արցախի նվիրաբերմամբ Ադրբեջանի ուժեղացումն ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի:

## 2. Լեռնահայաստանի հերոսամարտը՝ փրկության երաշխիք

ՀՀ ղեկավարությունը Սյունիքում տարվող աշխատանքները հունավորելու նպատակով որոշակի քայլեր էր ձեռնարկում: Այսպես՝ 1919 թ. մարտին անգլիացիների կարգադրությամբ Զանգեզուրից Անդրանիկի հեռացումից հետո՝ մինչև 1919 թ. նոյեմբերը, այնտեղ գործող Արսեն Շահնազյանն այդ ուղղությամբ որոշակի աշխատանք էր կատարել: Արժանին մատուցելով նրան՝ նշենք սակայն, որ նման դժվարին ժամանակներում անհրաժեշտ էր մեկը, որը կհամախմբեր պայքարի ողջ ներուժը: 1919 թ. օգոստոսի 18-ին ՀՀ կառավարությանն այդ մասին գրում էր Գողթանի կառավարիչ Ա. Մելիք-Մուսյանը<sup>15</sup>: Սակայն ՀՀ կառավարությունը զբաղված էր Վեդի-Բասարի և Շարուրի կռիվներով ու անկարող էր լրացուցիչ զորք ուղարկել: Նման պայմաններում ՀՅԴ Բյուրոյի առաջարկով Գարեգին Նժդեհն անցնում է Սյունիք:

Սյունիքում իրավիճակը տագնապալից էր: Չկար կանոնավոր զորք, միակ զինուժը գյուղացիությունն էր, որից էլ Նժդեհը ձեռնարկեց վաշտերի կազմակերպումը: Ղափան-Գենվազի ազգային խորհրդի հրավերով հրամանատարությունը ստանձնած Նժդեհի առաջին գործը եղավ 18-52 տարեկանների զորահավաքը: 1919 թ. հոկտեմբերի 23-ի հրամանով ամենօրյա անվանացուցակի ստուգման ժամանակ պետք է ընթերցվեին նահատակների անունները: Այդ քայլը հայրենասիրական բարձր տրամադրություն, հայրենիքի համար անձնվիրությամբ ծառայելու և քաջաբար նահատակվելու հոգեբանություն ձևավորեց: Իսկ նման խնկելի անուններ էին Քեռին, Խեչոն և հայ ազատամատի մյուս ճանաչված առաջնորդները: Գյուղերում սկսեցին կառուցվել միջնաբերդեր, որոնք կոչվեցին այդ նահատակների անուններով՝ Քրիստափորաբերդ, Խեչոաբերդ: Վաշտերն ունեին իրենց «հեղափոխական սուրբը»՝ Քրիստափոր, Ռոստոմ, Դուման, Խեչո<sup>16</sup>: Աշխարհագրորի կազմավորման և գործունեության ընթացքում Նժդեհը մարտական որակներից զատ ու գլխավորապես շեշտը դնում էր պայքարի գաղափարահոգեբանական կողմի վրա՝ հանդես գալով և՛ որպես ռազմական հրամանատար, և՛ **գաղափարախոս ու անխոնջ կազմակերպիչ**:

Արդեն 1919 թ. նոյեմբերի վերջին Դավիթբեկյան վաշտերը 7 օրում ազատագրեցին Գեղվաձորը: Այդ առթիվ 1920 թ. հունվարի 15-ին 25 վաշ-

15 Տե՛ս **Գևորգյան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը, Եր., 1991, էջ 25-26:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 31-32:

տապետներ Նժդեհին նվիրեցին Դավիթբեկյան պատվո սուր<sup>17</sup>: Այս առումով չափազանց ուշագրավ էր ՀՅԴ Գորիսի «Սյունիք» պաշտոնաթերթի «Երկրորդ Դավիթ Բեկ» հոդվածը, որով Նժդեհը ներկայացվում էր որպես նորօրյա Դավիթ Բեկ<sup>18</sup>:

Այս ամենին զուգահեռ ՀՅԴ Բյուրոյի անունից Ա. Զամայանը 1919 թ. դեկտեմբերի 10-ին վարչապետ Ալ. Խատիսյանին հղած գրությամբ հայադրբեջանական հարաբերությունների կարգավորումը պայմանավորում էր արտաքին ուժերի միջամտությամբ և խորհուրդ էր տալիս պաշտպանել Սյունյաց գավառները<sup>19</sup>:

1919 թ. նոյեմբերին Դրոն 600 զինվորով ժամանեց Գորիս: 1920 թ. հունվարին նա գեներալ Ղազարովի հետ ծրագրեց Շուռնուխի արշավանքը, մինչդեռ Նժդեհն ավելի նպատակահարմար էր գտնում Օրդուբադի դեմ արշավը: Այդ արշավի ուշացման հետևանքով Գողթանի վիճակը վտանգվեց: Վերջինիս մնացորդացի փրկության գործը կատարեցին Սյունյաց վաշտերը: 1920 թ. փետրվարի 12-ին Նժդեհն արժանվույն գնահատեց դրա նշանակությունը. «Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր հայորդիների՝ **Աստուածաշունչ Քրիստափորի եւ Ռոստոմի** արիւնաներկ ու սրբապղծուած ծննդավայրը՝ երբեմնի չքնաղ Ագուլիսները պիտ վերագրաւուին, պիտ վերականգնին իրենց շէնութեամբ ու բարոյական մեծութեամբ: Քաջ եւ հայրենասէր զինուորներ, լցուէք բոցով ու վրէժով: Առ ա՛ջ , մեզ հետ Աստուած եւ մեծ հայորդիների՝ Քրիստափորի ու Ռոստոմի անհանգիստ հոգիները»<sup>20</sup>: Ըստ Նժդեհի օգնական Քաչալ Ղազարի՝ հրամանատարը «իր պերճախօս լեզուով զինուորները խրախուսեց ու քաջալերեց անշունչ քարերն իսկ»<sup>21</sup>:

Չնայած էական օգնությունից զուրկ լինելուն՝ Նժդեհն ինքը ժամանակին աջակցում էր նաև Արցախին: Հասկանալի էր արցախցիների 1920 թ. ապրիլի 8-ի դիմումը Զանգեզուրի զինուժի հրամանատար գեներալ Ղազարովին, պատճենը՝ Նժդեհին<sup>22</sup>: Նրանք խնդրում էին օգնել ոչ թե զորքով կամ դրամով, այլ մի «փորձառու առաջնորդով», որպիսին համարում էին Նժդեհին, քանզի նա «ստեղծուած է ժողովրդի համար»<sup>23</sup>: Դիմումի հիման վրա Նժդեհի ուժերն անցան Դիզակ և չեզոքացրին Դրոյի զորքի աջ թևին սպառնացող վտանգը: Մարտերի շնորհիվ Զանգեզուրից Արցախ ընկած ողջ տարածքն ազատագրվեց թշնամուց:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 41:

18 Տե՛ս «Սիւնիք», Գորիս, 1920, N 7:

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 155, թ. 1:

20 **Ձևորդյան Վ.**, նշվ. աշխ., էջ 46-48:

21 **Աս.** Նժդեհ, Պէյրուք, 1968, էջ 97:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 57-58:

23 Նույն տեղում, էջ 58:

1920 թ. ապրիլի վերջին Սյունիքի գլխավոր սպառնալիք Ադրբեջանը քեմալականների հրահանգով անարյուն խորհրդայնացավ: Տարածաշրջան մուտք գործեց Խորհրդային Ռուսաստանը, որը խնդիր էր դրել շտապ կարգով խորհրդայնացնելու ողջ Այսրկովկասը: Իսկ այդ հանգամանքն առաջին հերթին պետք է հարվածեր Արցախին և Սյունիքին, քանի որ Ադրբեջանը բրիտանական հովանավորի փոխարեն ձեռք էր բերել նոր դաշնակից՝ ի դեմս Կարմիր բանակի:

Բոլշևիկների Մայիսյան ապստամբության շրջանում՝ 1920 թ. մայիսի 17-ին, Կապարգողթի ժողովը Նժդեհի գեկույցից հետո որոշեց ՀՀ անկախության դեմ ուղղված բոլոր շարժումները «խեղդել սաղմի մէջ»<sup>24</sup>: 1920 թ. մայիսի 25-ին Դրոյի ջոկատը, տեղի տալով խորհրդային ճնշմանը, Արցախից նահանջեց Սյունիք<sup>25</sup>: 1920 թ. հունիսին Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յուլյանը հայտնում էր ՀՀ կառավարությանը, որ Դրոն ուզում է հեռանալ Սյունիքից և գործում է ինքնուրույն՝ իր քայլերը չհամաձայնեցնելով տեղի իշխանությունների հետ, ուստի խնդրում էր ղեկավար անձ ուղարկել<sup>26</sup>: Արդեն հունիսին Սյունիքից հեռացան պետական պաշտոնյաները և ՀՅԴ գրեթե բոլոր գործիչները: Խորհրդարանի անդամ Զ. Յուլյանը ևս հունիսի 1-ին ՀՀ կառավարությանն առաջարկեց շտապ ղեկավար անձ ուղարկել<sup>27</sup>:

ՀՅԴ Զանգեզուրի կոմիտեին ուղղված 1920 թ. հունիսի 19-ի նամակում Համո Օհանջանյանը ՀՅԴ Բյուրոյի և կառավարության անունից ընդունում էր երկրամասում մեծ լիազորություններով հատուկ խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը<sup>28</sup>: Սակայն նման խորհուրդ չստեղծվեց: Չնայած այդ պարագային՝ տեղի ուժերն անգործ չէին: 1920 թ. հունիսի վերջին Գորիսում գումարվեց Ազգային խորհրդի և կուսակցական բոլոր պատասխանատու գործիչների ընդհանուր ժողով, որի օրակարգում բոլշևիկների դեմ պայքարի խնդիրն էր: Ժողովին ներկա էին Դրոն, Նժդեհը, Արշակ Շիրինյանը, Վահան Խորենին, Զաքար Յուլյանը, Սերգեյ Մելիք-Յուլյանը, Գերասիմ Բալայանը և Յապոնը: Ժամանակակցի վկայությամբ՝ «համարեայ բոլորը խուսափողական տրամադրություն ունէին՝ չցանկանալով բախուել խորհրդային զինուժի հետ»<sup>29</sup>: Բոլշևիկները միամտաբար համարվում էին գաղափարակիցներ: Եվ միայն Նժդեհն էր, որ ականատես Վազգեն Միրզաբեկյանի (Վանբեկ) վկայությամբ՝ արմատական բեկում մտցրեց նման հանդուրժողական մթնոլորտում. «Կարծես Դավիթ Բեկը վերակենդանա-

24 Նույն տեղում, էջ 61-62:

25 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 51, թ. 2:

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 117, թ. 20:

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1080, թ. 1-2:

28 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 161, թ. 2:

29 ԱԽ, նշվ. աշխ., էջ 489-492

ցել էր: Կրակ էր ժայթքում իր բերնից եւ համակ վճռականությւն»<sup>30</sup>: Նժդեհը հատկապէս շեշտեց, որ «Հայրենիքը ո՛չ ոք իրաւունք չունի առանց կռուի զիջելու խորհուրդներին, որոնց միացած է Ադրբեջանը: Սուտ են նրանց շռայլած բոլոր խոստումները»<sup>31</sup>: Իբրև «գորավար և քաղաքական ղեկավար», ըստ Վ. Միրզաբեկյանի, Նժդեհը միանգամայն ճիշտ ըմբռնեց իրադրությունը, իսկ ներկաներից «ոչ ոք ունեցաւ այն դրական կեցուածքը, վճռականությւնը եւ հստակ պատկերացումը, ինչ որ ունեցաւ Նժդեհը»<sup>32</sup>:

Սակայն Դրոյի առաջարկով, այնուամենայնիվ, որոշվեց ամբողջ կազմով հեռանալ Սյունիքից և թողնել, որ «ժողովուրդը ճաշակէ մեծամասնականների համն ու հոտը՝ թեկուզ ժամանակաւոր»<sup>33</sup>: Օգտվելով ստեղծված դրությունից՝ բոլշևիկները 1920 թ. հուլիսի 5-ին գրավեցին Գորիսը<sup>34</sup>: Դրոն, վերախմբավորելով ուժերը, 1920 թ. օգոստոսի 1-ին Վայոց ձորից հարձակամամբ անցավ Միսիան, ապա ազատագրեց Գորիսը: Ցավոք, այդ հաջողությունը երկար չտևեց, և համալրելով ուժերը՝ բոլշևիկներն օգոստոսի 7-ին կրկին գրավեցին Գորիսը<sup>35</sup>, իսկ սեպտեմբերի 1-ին՝ Կապանի Հանքերը<sup>36</sup>, գնդակահարեցին Վ. Խորենուն և Ա. Շիրիյանին: Ի դեպ, 1920 թ. օգոստոսին Դրոն ուներ 1.300 զինվոր, Նժդեհը՝ 300, Պողոս Տեր-Դավթյանը (Միսիան)՝ 120<sup>37</sup>:

1920 թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետությունը համաձայնագիր կնքեց: Ըստ դրա՝ ՀՀ նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը Դրոյի միջոցով Նժդեհին հրամայեց, որ նա «հաւաքի իր զօրամասերը, նոյնպէս բոլոր ցանկացողներին ու նախագգուշական միջոցներ ձեռք առնելով անցնի մեր տարածքը [ՀՀ], բերելով իր հետ ամբողջ զէնքերը»<sup>38</sup>: Համաձայնագրի նկատմամբ Դրոն և Նժդեհն ունեին հակադիր դիրքորոշումներ. Դրոն հակված էր անխոս կատարելու հրամանը և վերադառնալու Երևան, իսկ Նժդեհն օգոստոսի 13-ին կտրականապէս հրաժարվեց այն կատարելուց, իր խոսքով. «Չկատարելով հրամանը՝ փրկեցի Հայրենիքը»<sup>39</sup>:

1920 թ. օգոստոսի 25-ին Ղափանի Կավարտ գյուղի եկեղեցում Կապարգողթի հայությունը ուխտեց «պատմական մեծ հերոս Դավիթ Բեկի եւ Մխիթար Սպարապետի անունով՝ հաւատարիմ մնալ հայրենի երկրի ազատութեան, հրամանատար Նժդեհին եւ կռուել մինչեւ վերջին շունչը»<sup>40</sup>: Ժո-

30 Նույն տեղում, էջ 489-492:

31 Նույն տեղում:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, էջ 485-486:

34 Տե՛ս **Նժդեհ Պ.**, Հայ-բոլշևիկեան կռիւները, «Հայրենիք», Պոսթոն, 1923, N 12, էջ 96:

35 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 185-186:

36 Տե՛ս **Նժդեհ Պ.**, Հայ-բոլշևիկեան կռիւները, էջ 98-99:

37 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1457, ց. 1, գ. 173, թ. 1:

38 ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 156:

39 **Նժդեհ Պ.**, Հայ-բոլշևիկեան կռիւները, էջ 96-98:

40 **Նժդեհ Պ.**, էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», Պոսթոն, 1924, N 3, էջ 134:

ղովում Նժդեհին կոչեցին սպարապետ: Արժևորելով պահի ոգեղենությունն ու հերոսականությունը՝ նույն օրը Նժդեհը իր վաշտերին ուղղեց ցեղային բարոյականով լեցուն ռազմաշունչ յոթ պատվիրանները<sup>41</sup>:

1920 թ. հոկտեմբերի 1-ին Նժդեհը կրկին օգնության դիմեց ՀՀ զինվորական նախարարին: Այս դիմումին ի պատասխան ստացվեց սովորական դարձած՝ «Հայաստանը ի վիճակի չէ Ձեզ ներկայումս իրական օժանդակություն ցոյց տալ: Դուք ինչպէս մինչ այժմ, այնպէս եւ հիմա պիտի մեն-մենակ շարունակեք Ձեր հերոսական գոյամարտը: Միայն իմացեք, որ մեր եւ ամբողջ հայ ժողովրդի համակրանքը դէպի Ձեզ է»<sup>42</sup>: Իսկ ՀՅԴ Բյուրոյի փոխանդամ Սարգիս Արարատյանը պատասխանեց. «Ստեղծուած կացութեան մէջ կառավարութիւնն անկարող է որեւէ զգալի օգնութիւն հասցնել Ձեզ: Գիտակցելով անգամ Ձեր վարած հերոսական պայքարի պատմական նշանակութիւնը մեր պետութեան կազմակերպման համար, Բիւրոն եկավ հետեւեալ եզրակացութեան՝ Ա. Ձեր շարժումը համարել խիստ կարեւոր եւ անհրաժեշտ եւ մեզ համար բացարձակապէս օգտակար, Բ. Զանգեզուրի ամբողջ գործի ղեկավարութիւնը թողնելով Ձեզ՝ թէ՛ զինուորական եւ թէ՛ քաղաքացիական, Բիւրոյի կողմից ուղարկուած բոլոր անձինք կլինեն Ձեր տրամադրութեան տակ: Վստահ Ձեր եւ Ձեր ընկերների անձնագոհութեան եւ շրջանիդ քաջարի ժողովրդի անձնագոհութեան ու հայրենասէր ոգիին, յոյս ունենք, որ ո՛չ մի բոլակ չպիտի վարանեք շարունակելու սրբազան կռիւր մեր դարաւոր թշնամու դէմ»<sup>43</sup>:

Ամենակին չհուսահատվելով՝ 1920 թ. հոկտեմբերի 10-ին Նժդեհի վաշտերը ազատագրեցին Ղափանը, իսկ նոյեմբերին՝ Գորիսը և Միսիանը, և առաջին հերթին պատուհասեցին ՀՅԴ անվանի գործիչներ Վ. Խորենուն և Ա. Շիրինյանին սպանած տմարդի հայ բոլշևիկներին: Գնահատելով դա՛մանուլը արձագանքեց. «Փա՛ռք եւ պարծա՛նք Զանգեզուրի հերոսներին, պատի՛ւ ու հարգա՛նք ՀՅԴ ծնունդ Նժդեհին, հայ անվեհեր կտրիճ զինուորներին, որոնք, փարած գէնքին, հայ ազատագրութեան գոյամարտն են սղում ձինսապատ բարձունքներում, սոված ու տկլոր»<sup>44</sup>: Իսկ ՀՅԴ Արևիքի [Մեղրիի] կոմիտեն հոկտեմբերի 16-ին հայտարարեց. «**Թող հպարտանա՛ մեր կուսակցութիւնը, թող ժպիտը փայլի՛ նորա շուրջն բոլորած շիտակ ու անկեղծ կուսակցականների դէմքերին, որ իր շարքերում ունի Նժդեհ, որ իր ծոցում սնուել, մեծացել է Գեղուաձորի աժդահա փաշան, Զանդուրի փաղիշահը, Կապարգողթի սիրելի հրամանատարը: Թող հրճուին մեր բոլոր ընկերները**» (ընդգծումը մերն է - Ա. Լ.)<sup>45</sup>: Հաղ-

41 Տե՛ս Նժդեհ Պ., Հատընտիր, Եր., 2006, էջ 427-428:

42 Արմուտ գիրք, Գորիս, 1921, էջ 34:

43 Գևորգյան Վ., նշվ. աշխ., էջ 85-86:

44 Նույն տեղում, էջ 180:

45 «Այգ», Թարիզ, 1920, N 41:



թանակի առթիվ ՀՅԴ Բյուրոյի և կառավարության քարտուղար Հովհաննես Տևեճյանը նոյեմբերի 30-ին Նժդեհին գրեց. «Ամբողջ ընկերները հիացմունքով կհետեւին Դավիթ Բեկի հոգեզաւակի հերոս պայքարին ու կարող եմ ասել, թէ ամբողջ մեր կուսակցական մարմինների եւ առհասարակ հայութեան լայն խաւերի ջերմ համակրութիւնը Ձեզ հետ է»<sup>46</sup>:

Մինչդեռ փորձություններն առջևում էին: Արդեն 1920 թ. նոյեմբերի 29-ին Իջևանում բոլշևիկյան ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանը հռչակեց խորհրդային, և իշխանությունը բոլշևիկներին անցավ դեկտեմբերի 2-ի ՀՀ – ՌՍՖՍՀ համաձայնագրով, որով **ողջ Զանգեզուրի գավառը** տրվում էր Հայաստանին: Սակայն, փաստացի, Սյունիքի դրությունն ավելի օրհասական դարձավ. հիմնական ռազմաքաղաքական հենարան Հայաստանի Հանրապետությունն այլևս խորհրդային էր: Բայց Կարմիր բանակի հրամանատարության՝ հանձնվելու կոչերին ի պատասխան՝ Նժդեհը պայման դրեց հեռանալու այն դեպքում, եթե Սյունիքն ու Արցախը միացնեն Հայաստանին, ինչը բոլշևիկները մերժեցին<sup>47</sup>:

Մերժումին ի պատասխան՝ Տաթևի համազանգեզուրյան համագումարը 1920 թ. դեկտեմբերի 25-ին վճռեց. «Զանգեզուրը յայտարարել ժամանակաւոր ինքնաւար, մնալով անկախ մինչեւ քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»<sup>48</sup>: Ինքնավար Սյունիք հռչակած համագումարը միաձայն ընտրեց Նժդեհին որպէս «Սիւնեաց Սպարապետ եւ իր բախտը յանձնել նրան»<sup>49</sup>:

Այս առումով ուշագրավ է Նժդեհի նամակը ՀՅԴ Ատրպատականի կոմիտեին. «Իմ դրութեան ողբերգականութիւնը նրանում է, որ, կտրուած աշխարհից զուրկ եմ տեղեկատուութիւն ստանալու հնարաւորութիւնից: ՀՀ ինձ դրել է ամենանեղ դրութեան մէջ: Ո՛չ օգնութիւն, ո՛չ տեղեկատուութիւն, ո՛չ էլ որոշ հրահանգներ եմ ստանում: Ես շարունակելու եմ կռիւները եւ պիտի դիմադրեմ, քանի դեռ ժողովուրդի մի մասն ինձ հետ է: Արագացրե՛ք օգնութիւնը, որի ուշացումը կնշանակի թուլացնել մարտնչող գիւղացու մարտական կորովն ու հաւատը»<sup>50</sup>: Իսկ ՀՅԴ Ատրպատականի կոմիտեն «անխառն հիացմունք» հայտնելով նրա «անձնուէր եւ տոկուն» պայքարի համար, նշում էր, որ օժանդակությունը միայն «բարոյական նշանակութիւն» ունի և տիրող պայմաններում ցանկալի չափով չի կարող օգնել «պատմական նշանակութիւն ունեցող մեծ գործին»<sup>51</sup>: Ինչևէ, 1921 թ. փետր-

46 Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 92:

47 Տե՛ս Նժդեհ Պ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք», Պոսթոն, 1925, N 8, էջ 131-133:

48 Ազատ Սիւնիք, Գորիս, 1921, էջ 44-58:

49 Պետրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 123-125:

50 Յուշանատեան Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանի, Թիփրան, 1968, էջ 116-120:

51 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 16:

վարի 15-ին Յապոնն ազատագրեց Դարալագյազը: Այդ հաղթանակն արժանավույն գնահատեցին ՀՅԴ Գործիսի կոմիտեն և Հ. Օհանջանյանը<sup>52</sup>:

1921 թ. փետրվարին Երևանում բռնկվեց հակաբոլշևիկյան ապստամբություն, ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտեն<sup>53</sup>, ինչը ողջունեց Նժդեհը. «Սրտի անհուն բերկրանքով ողջունում եմ Արարատեան հայութեան ապստամբութիւնը եւ ազատագրումը օտար լծից: Ինքնավար Լեռնահայաստանի ժողովուրդը ջերմ կարօտով սպասում է այն երջանիկ ռուպէին, երբ քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր մայր երկրին»<sup>54</sup>: Փաստացի այս շրջանում Երևանի ապստամբների միակ իրական աջակիցը սուղ հնարավորություններ ունեցող սյունեցիներն էին:

Երևանում բոլշևիկյան Հեղկոմի անկումից հետո՝ 1921 թ. փետրվարի 20-ին, Ս. Վրացյանը Ռուբեն Տեր-Մինասյանին և Նժդեհին գրում էր. «Եթե այդտեղ առանձին անհրաժեշտութիւն չկայ, շատ լաւ կլիներ, որ Նժդեհը իր մի քանի հարիւր զանգեզուրցի-դարաբաղցի մարտիկներով անցնէր Երեւան՝ ժողովուրդի բարոյական թափը ամրացնելու համար: Կլամենայի, որ Նժդեհն այստեղ պաշտօն ստանձնէր»<sup>55</sup>: Իսկ մարտի 25-ին Ս. Վրացյանը Նժդեհին և Յապոնին առանձնապէս շեշտում ու խնդրում էր բացել Դարալագյազ-Զանգեզուր-Երևան կենտրոնական գիծը, ինչպէս նաև մարտական օժանդակություն հասցնել<sup>56</sup>: Ի պատասխան՝ Նժդեհը տեղահանեց Դարալագյազի և Չանախչիի միջև ընկած թուրքական գյուղերը և ապահովեց Երևանի հետ կապը: Իրադրությունը, սակայն, կտրուկ փոխվեց 1921 թ. ապրիլի 2-ին՝ Երևանի անկումից հետո: Այդ առթիվ ապրիլի 15-ին Նժդեհը կոչ ուղղեց Գենվազի զորքին և ժողովրդին՝ փրկելու «հայ ժողովուրդի սիրտն ու ուղեղը՝ նրա մտաւորականութիւնը»<sup>57</sup>:

Մի ուշագրավ փաստի մասին ևս: Հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ ապստամբների նահանջի միակ ապահով ուղին Սյունիքն է, Ս. Վրացյանը ապրիլի 4-ին Ռուբեն Տեր-Մինասյանին գրել էր. «Մեր բանակի մնացորդները, մեր ամբողջ մտաւորականութիւնը, մեր շատերի ընտանիքները կարող են փրկուել միայն Լեռնահայաստան ապաստանելով»<sup>58</sup>: Ս. Վրացյանը ապրիլի 21-ին Հայաստանի «բոլոր ռազմութերը և գոյքերը» հանձնեց Լեռնահայաստանի կառավարությանը և Սյունյաց սպարապետին<sup>59</sup>: Նժդեհը Լեռնահայաստանի բոլոր իշխանություններին հրամայեց Գենվազ անցնող Ս. Վրացյանին, Հ. Քաջազնունուն, Հ. Օհանջանյանին և

52 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 29, 35-39:

53 Կոմիտեի անվանումն առաջարկել է Գ. Նժդեհը: Տե՛ս **Խմբակետ Մարտիրոս Աբրահամեան**, Իմ յիշելի յուշերը, Թեհրան, 1978, էջ 28-30:

54 «Ազատ Հայաստան», Եր., 1921, մարտի 9:

55 **Հարությունյան Ա.**, նշվ. աշխ., էջ 16:

56 Տե՛ս «Ազատ Սիւնիք», Գորիս, 1921, N 5:

57 **Հարությունյան Ա.**, նշվ. աշխ., էջ 17:

58 **Չևորցյան Վ.**, նշվ. աշխ., էջ 150-153:

59 Տե՛ս **Հարությունյան Ա.**, նշվ. աշխ., էջ 17:

այլոց ցույց տալ «ամենապարտ եւ պատշաճ աջակցութիւն»<sup>60</sup>: Ս. Վրացյանի՝ Թավրիզ անցնելը դյուրացնելու և ապահով դարձնելու խնդրով Նժդեհը հատուկ միջնորդագիր հղեց Ատրպատականի խաներին: Հայ գաղթականության ծանր վիճակով մտահոգ Նժդեհը դեռ 1921 թ. ապրիլի 26-ին Պարսից շահից նրանց համար Արաքսն անցնելու թույլտվություն էր խնդրել: Ի պատասխան՝ պարսկական խաները, «խոր եւ բարձր գնահատելով Նժդեհի հռչակաւոր անունը եւ հեղինակութիւնը»<sup>61</sup>, համաձայնեցին:

Բնականաբար, Երևանից նահանջող գաղթականությունը հուսալքեց Սյունիքի ուժերին, իսկ դրա առաջն առնելու համար անհրաժեշտ էր ոգևորիչ մի նոր քայլ: 1921 թ. ապրիլի 21-ին Հայրենիքի փրկության կոմիտեն Տաթևի վանքում որոշեց ինքնալուծարվել<sup>62</sup>: Այս նկատառումից ելնելով՝ 1921 թ. ապրիլի 27-ին Տաթևի երկրորդ համագումարը Ինքնավար Սյունիքը հռչակեց Լեռնահայաստան: Վարչապետ ընտրվեց Նժդեհը՝ միաժամանակ ստանալով գորավարի աստիճան և պարգևատրվելով «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով<sup>63</sup>:

Ռազմականին զուգահեռ՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը փորձում էր ցույց տալ կամ ցույց էր տալիս, որ պատրաստ է խնդիրը կարգավորել դիվանագիտական եղանակով: Սակայն 1921 թ. մայիսի 12-15-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում Լեռնահայաստանի պատվիրակների հետ բանակցություններն արդյունք չտվեցին<sup>64</sup>:

1921 թ. մայիսի 15-ին ՀՅԴ Ատրպատականի կոմիտեին գրած նամակում Նժդեհը հատկապես շեշտում էր. «Բոլոր դրութիւններից, որքան էլ որ նրանք կրիտիկական լինեն, վճռական եւ ուժեղ ցանկութեան դէպքում միշտ էլ կարելի է պատուով դուրս գալ, մենք եւ կուսակցութիւնը փրկեցինք մեր ցեղի մտաւորականութեանը կարմիր կացնից, ինչն ինքնին մի մեծ, պատմական ծառայութիւն է, իսկ եթէ երեւանեան ապստամբութիւնը տարերային բնոյթ չկրեր եւ այն առաջացած ու վարած լիներ միայն եւ միմիայն մեր կուսակցութիւնը՝ գուցէ եւ աղէտը տեղի չունենար»<sup>65</sup>:

1921 թ. մայիսի 28-ին Գորիսում հանդիսավոր նշվեց ՀՀ անկախության տարեդարձը: Այս առթիվ ուշագրավ է ականատեսի վկայությունը. «Մարդակամայ կյիշեր Աւարայրի դաշտի հերոսամարտը, սպարապետ Վարդան Զորավարին ու վերջինիս կհամեմատեր մեր նորագոյն պատմութեան պատիւը փրկող սպարապետ Նժդեհի հետ: Եթե առաջինը կմղեր կրոնական կռիւ, երկրորդը կմղեր գերազանցօրէն քաղաքական կռիւ, յանուն հայ ժողովրդի ազատութեան եւ անկախութեան, յանուն իսկական յեղափոխու-

60 Պևրոզյան Վ., նշվ. աշխ., էջ 158-159:

61 Նույն տեղում:

62 Տե՛ս Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից, Պէյրուք, 1956, էջ 109:

63 Տե՛ս Նժդեհ Չ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք», Պոսթոն, 1925, N 10, էջ 139:

64 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 5-21, 36-46:

65 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 18:

թեան»<sup>66</sup>: Արժևորելով Մայիս 28-ի 1921 թ. գորիսյան տոնակատարության նշանակությունը՝ հետագայում՝ 1932 թվականին («**Մեր Անկախութեան Մայիսը**»), Նժդեհը նշում էր. «Այդ օրը Սիւնեցու աչքերի մէջ կարելի էր տեսնել մեր ցեղի բովանդակ գորոյթն ու թափը: Այդ օրը յաղթական էր Սիւնեցին, քանզի ցեղի ոգին կը շարժեր հայ վաշտերը, քանզի Սիւնեաց աշխարհում սպայէն եւ զինուորէն՝ հեղինակութիւնէն եւ հնազանդութիւնէն զատ կար մի Երրորդը՝ Ցեղը: Ես այդ օրը տեսա Սիւնիքը՝ իր ոյժի, փառքի իր մեծութեան մէջ»<sup>67</sup>: Գ. Նժդեհը, Ս. Մելիք-Յուլյանը, Հ. Տևեճյանը, Ս. Եղիազարյանը՝ «տուկ իբրև ընկեր», Ս. Վրացյանին հայտնում էին իրենց մտահոգությունը Սյունիքում տիրող երկիշխանության վտանգահարույց լի-նելու առթիվ թե՛ արտաքին և թե՛ ներքին ձակատներում<sup>68</sup>:

Փետրվարյան ապստամբության տեղատվությունից և Երևանի գաղ-թից հետո Սյունիքում գործում էին երկու՝ Ս. Վրացյանի Հայաստանի Հան-րապետության և Նժդեհի Լեռնահայաստանի կառավարությունները: Նժ-դեհը Լեռնահայաստանի հռչակումը պայմանավորում էր ոչ թե Սյունիքի անկախության, այլ անվտանգության երկարաձգման, ուժերի վերախմբ-վորման անհրաժեշտությամբ<sup>69</sup>: Սակայն կարևորելով ուժերի միավորման հրամայականը՝ 1921 թ. հունիսի 1-ին կառավարությունները միավորվեցին, Լեռնահայաստանը հռչակվեց Հայաստան, վարչապետ ընտրվեց Ս. Վրաց-յանը, զինված ուժերի հրամանատար՝ Գ. Նժդեհը:

Սրանից գատ՝ Վայոց ձորի ձակատում կանգնած ՀՀ նախկին բանակի զորամասերի համար սովորական էր դարձել անկոփ կանձնվելը, ինչը բացասաբար էր ազդում սյունեցիների մարտունակության և բարոյահոգե-բանական վիճակի վրա: Այդ առթիվ խորհրդային ռազմական հետախու-զությունն իրավացիորեն նկատում էր, որ «մինչ Երևանի գաղթականների գալը Ջանգեզուրում գյուղացիների տրամադրությունը մարտունակ էր, բայց նրանց գալուց հետո այն ընկել է»<sup>70</sup>: Երկու ուժերի բարոյահոգեբ-անական վիճակի համեմատությամբ նշվում էր, որ Ջանգեզուրի գյուղացի-ների տրամադրությունը «գերբարձր է՝ Նժդեհի օգտին»<sup>71</sup>:

Նժդեհը 1921 թ. հունիսի 26-ին Ս. Վրացյանին ուղղեց հետևյալ գրու-թյունը. «Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա՝ խորհրդային Արար-տեան Հայաստանն իրեն ապահով զգալ չէ կարող: Այսպես է մտածել ու գործի անցել Երևանի Հեղկունը: Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան

66 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 150:

67 Նժդեհ Գ., Հատընտիր, էջ 158-159:

68 Տե՛ս Նժդեհ Գ., Ցեղի Ոգու շարժը, Սոֆիա, 1932, էջ 26-27:

69 Տե՛ս Նժդեհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, «Այրենիք», Պոսթոն, 1923, N 8, էջ 80:

70 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 20:

71 Նույն տեղում:

կա՝ Նախիջևանն ու Շարուրը չեն կարող կցել Ադրբեջանին, հայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա՝ ըմբռնել է մուսուլմանությունը»<sup>72</sup>:

Կարմիր բանակի Կովկասյան առաջին կորպուսի հրամանատար Թոդորսկին և գինվորական կոմիսար Սվիրիդովը «Զանգեզուրյան կռվի գաղափարական բովանդակությունը և մեր մարտավարությունը» գրքույկում և կոչերում հատկապես շեշտում էին ՀՅԴ-ի և Նժդեհի դեմ պայքարի կարևորությունը: Ավելին, վերջինս համարվում էր դեռևս մարտնչող «**վերջին գեներալը**», որի հետ անկասկած կապում էին Սյունիքի հերոսամարտի ապագան<sup>73</sup>:

1921 թ. հունիսի վերջին սկսված Կարմիր բանակի հարձակմանը սյունաց մարտիկներն անկարող էին դիմագրավել: Սյունիքում սկսվեց խորհրդայնացման գործընթաց, սակայն մարզի՝ Խորհրդային Հայաստանի կազմում մնալը արդեն ապահովագրված էր Լեռնահայաստանի հերոսամարտի շնորհիվ:

### 3. Լեռնահայաստանի անկման արտաքին ազդակները

Նժդեհի առաջնորդած՝ Լեռնահայաստանի հերոսական պայքարի շնորհիվ Ռուսաստանի կոմկուսի ղեկավարությունը ստիպված համաձայնեց Ռիգայում բանակցել ՀՅԴ Արտասահմանի պատասխանատու մարմնի ներկայացուցիչների հետ<sup>74</sup>:

Ռիգայի բանակցությունները եղան այն ժամանակ, երբ արդեն ճնշվել էր 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը, և Խորհրդային Հայաստանի տարածքից միակ ոչ խորհրդային հատված մնացել էր Սյունիքը: ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնի առաջարկով ՌԿ(Բ)Կ Կենտկոմի հետ բանակցությունների կայացման ծանրակշիռ «դրդապատճառը» Լեռնահայաստանն էր: Ռուսաստանի արտգործոժողկոմատի կոլեգիան համաձայնեց բանակցել՝ մտածելով, որ «բանակցությունները կարող են տպավորություն գործել Սյունիքի գյուղացիության վրա, որտեղ շարունակվում է դաշնակցականների ապստամբությունը»<sup>75</sup>:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմը 1921 թ. հունիսի 20-ին որոշեց բանակցություններին պաշտոնական բնույթ չտալ և վարել միայն տեղեկատվական նպատակով՝ ուժեղացնելով ընդհատակյա աշխատանքը Զանգեզուրում<sup>76</sup>: Ս. Տեր-Գաբրիելյանը ՌԿ(Բ)Կ կենտկոմին դիմեց հետևյալ դիտարկմամբ. «Հայաստանի

72 Պևրոզյան Վ., նշվ. աշխ., էջ 169-170:

73 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 306, թ. 1-3:

74 Մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Ռիգայի 1921թ. ՀՅԴ-ՌԿ(Բ)Կ բանակցությունները խորհրդային գաղտնի փաստաթղթերում, «Վեմ», Եր., 2012, N 1, էջ 205-240:

75 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 10-12:

76 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 11:

ծայրամասերից մեկը՝ Զանգեզուրը, մինչև օրս գրավված է դաշնակ ապստամբների կողմից, ինչի խաղաղ լուծումը խիստ ցանկալի է, բանակցությունները, հավանաբար, համապատասխան ազդեցություն կունենան Զանգեզուրի աշխատավոր գյուղացիական մասսաների վրա, և հնարավոր է, որ ոչնչի էլ չհասնեն»<sup>77</sup>: Պատվիրակության անդամ Վ. Տեր-Վահանյանը ՌԿ(Բ)Կ Կենտկոմին ուղղված նամակով համոզմունք էր հայտնում, որ տվյալ փուլում բանակցություններն անհրաժեշտ են, քանի որ Զանգեզուրի հարցը դուրս է եկել Խորհրդային Հայաստանի սահմաններից, և համակովկասյան խռովության վերածվելու վտանգ կա<sup>78</sup>: Սակայն նախնական համաձայնագրի տեքստը ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն չհասցրեց քննարկել, որովհետև 1921 թ. հուլիսի 16-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Ս. Լուկաշինը շտապ հեռագրեց. «Զանգեզուրը լիովին վերացված է: Դաշնակցականների հետ բանակցությունները ՀԿ(Բ)Կ Կենտկոմը ոչ նպատակահարմար և նույնիսկ վնասակար է համարում, մանավանդ արտասահմանում դաշնակցությունն ամբողջությամբ վարկաբեկված է, իսկ երկրի ներսում մենք նրանց վերջնականապես ջախջախում ենք»<sup>79</sup>: 1921 թ. հուլիսի 26-ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոն համաձայնագրի նախագիծը մերժեց<sup>80</sup>:

Եվ միայն Նժդեհի՝ Արաքսն անցնելուց հետո բոլշևիկները դադարեցրին ՀՅԴ-ի հետ տարվող ճարահատյալ բանակցությունները. «Ռիզայի բանագնացները կկորցնեին կարելուր այդ գէնքը [Սյունիքի կռիվը], որու համար գլխաւորաբար խորհուրդները պիտի բանակցեին ՀՅԴ հետ»<sup>81</sup>:

Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ շնորհիվ Նժդեհի առաջնորդած Լեռնահայաստանի հերոսամարտի և Խորհրդային Հայաստանի բողոքների անտեսման՝ Ռուսաստանի կոմկուսի ղեկավարությունը ճարահատյալ բանակցեց ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնի հետ, որի արդյունքում Սյունիքը թեպետ խորհրդայնացվեց, բայց մնաց հայկական ու ընդգրկվեց ՀԽՍՀ կազմում:

Իսկ հեռանալուց առաջ Նժդեհը սյունեցիներին հայտարարեց, որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, որ պիտի վերադառնա, եթե Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը: Այսինքն՝ իր իսկ խոսքով. «Սրտի անհուն կսկիծով, հակառակ իմ անհատական կամքի եւ ձգտումների, անխուսափելի հանգամանքներից ստիպուած թողեցի Լեռնահայաստանը»<sup>82</sup>: Հետաքրքիր է այն փաստը, որ 1921 թ. հուլիսին Թավրիզում

77 ՀԱՍ, ֆ. 1457, ց. 1, գ. 181, թ. 4:

78 Տե՛ս նույն տեղում, թ. 5:

79 ՀԱՍ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 29:

80 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1457, ց. 1, գ. 194, թ. 39:

81 **Քուրդճեան Յ.**, Ուրուագիծ ՀՅԴ Պատմութեան 1919-1924 հնգամեակ, Աթէնք, 1988, էջ 63:

82 **Հարությունյան Ա.**, Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, էջ 21:

Նժդեհը կտրականապես մերժել էր Զանգեզուր վերադառնալու և ապստամբություն բարձրացնելու անգլիական հյուպատոսի առաջարկը<sup>83</sup>:

Այդուհանդերձ, Լեռնահայաստանի տեղատվությունն ուներ հետևյալ գլխավոր պատճառները՝ 1. ՀՀ քաղաքական-կուսակցական ղեկավարության կրավորական դիրքորոշումը, 2. Վրաստանի և ՀՀ անկմամբ Այսրկովկասում միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրադրության ձևավորումը, 3. Փետրվարյան ապստամբության անկումից հետո Լեռնահայաստանում ստեղծված ռազմաքաղաքական «երկվությունը», 4. Երևանից 10 հազար գաղթականների նահանջի բարոյահոգեբանական և ռազմական բացասական ազդեցությունը, 5. ռազմամթերքի և պարենի խիստ պակասը:

#### 4. Նժդեհի դերակատարության գնահատականը

Եթե Հայաստանի Հանրապետության անկման և տարածքային կորուստների կարևոր պատճառներից դարձավ համապատասխան կամքի ու վճռականության տեր անհատի բացակայությունը, ապա Լեռնահայաստանի հերոսամարտի հաջողության գործում մեծ դեր խաղաց նմանատիպ անհատի՝ Գարեգին Նժդեհի առկայությունը: Սյունիքը Նժդեհի առաջնորդությամբ մաքառեց առանց շունչ առնելու. ռազմաքաղաքական շրջափակման, տարբեր թշնամիների դեմ մաքառման, իրադարձությունների նպաստավոր և ոչ նպաստավոր զարգացման պայմաններում ու դիմակայեց բոլոր վտանգներին:

1918–1921 թթ. Զանգեզուրում եղել են ՀՅԴ մի շարք ականավոր գործիչներ, որոնց շարքում Նժդեհի դերը առանձնահատուկ էր: Ամենևին նպատակ չհետապնդելով սովերեյն մյուս գործիչներին՝ հարկ է շեշտել, որ, որպես կանոն, նրանց գործունեությունը գերազանցապես կրում էր անցողիկ և ժամանակավոր բնույթ: Նրանք Զանգեզուր էին գնում լոկ որպես պաշտոնյաներ և, որպես այդպիսին, հեռու էին մնում ժողովրդից, նրա հոգսերից, դժվարություններից, պայքարից: Եվ ամենակարևորը, իրենց գործողություններին նրանք երբեք ոգեղեն և վերափոխող բնույթ չէին հաղորդում: Պարզապես նման գործիչները, իրենց լավագույն հատկանիշներով հանդերձ, ծավալում էին սոսկ պաշտոնից բխող գործունեություն:

Իսկ Նժդեհը զինվորական, ռազմագետ և ազգային-քաղաքական գործիչ էր: Նա գաղափարական մարտիկ ու զինվոր-գորավար էր, որի ամենօրյա գերխնդիրը Սյունիքի պաշտպանությունն էր:

**Պայքարելով Սյունիքում և Սյունիքի համար՝ Նժդեհը ռազմավարական տեսանկյունից միշտ իր տեսադաշտում նկատի է ունեցել ողջ**

83 ՏԵՍ ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 24-25:

**Հայաստանի պետականության և հայոց հավաքական շահերը: Երբեք որևէ դժվարության հանդեպ չընկրկելով՝ նա Սյունիքը ոչ մի դեպքում չի հակադրել ՀՀ-ին: Ուստի նա, բոլոր սյունեցիներին համախմբելով, դարձրեց մի ամրակուռ բռունցք, որն առաջին հերթին և գերազանցապես ուղղված էր ՀՀ արտաքին թշնամիների դեմ:**

1919–1921 թթ. Նժդեհը միշտ հավատարիմ մնաց իր բախտն ու ապագան իրեն ապավինած սյունեցուն, չլքեց նրան, կիսեց և՛ մի կտոր չոր հացը, և՛ խրամատը՝ մերժելով Երևան վերադառնալու՝ ՀՀ ղեկավարության հրամանները: Նա արժանացավ սյունեցու հարգանքին, պատվին, սիրուն և անսասան վստահությանը: Այս ամենի շնորհիվ Նժդեհն օրինաչափորեն դարձավ Լեռնահայաստանի առաջնորդը: Հենց այդ միասնության շնորհիվ էլ Ազատ Սյունիքը պայքարեց, գոյատևեց և հարատևեց՝ միաժամանակ ապացուցելով հայ ժողովրդի և ՀՀ գոյության իրավունքը: Ըստ այդմ՝ Նժդեհին բնորոշ ամենագլխավոր տարբերակիչ առանձնահատկությունն էր **ժողովրդական առաջնորդ** լինելը, հատկանիշ, որին ի գորու չեղավ տիրապետելու ՀՀ անկման շրջանի ոչ մի այլ գործիչ:

## Վերջաբանի փոխարեն

Խորապես համոզված լինելով, որ Լեռնահայաստանի հերոսամարտի իրական առհավատչյան Հայաստանի Հանրապետության և նրա կազմում Սյունիքի գոյությունն էր, փաստենք, որ այս անօրինակ հերոսամարտի ընթացքում 1919–1921 թթ. թշնամին ունեցել է 15 հազար սպանված, 7 հազար գերի, կորցրել 200 գնդացի, 7 թնդանոթ, 10 հազար հրացան: Եվ, ամենակարևորը, այդ ժամանակահատվածում մաքրվել–հայացվել են շուրջ 200 թուրքաբնակ գյուղեր<sup>84</sup>:

Եթե Նժդեհի առաջնորդությամբ Սյունիքի հայությունը հերոսաբար չկռվեր, ապա ազերի–բոլշևիկ թշնամական արքանում ՀՀ անվտանգ գոյությունը մեծապես հարցականի տակ կլիներ, իսկ հետագայում Խորհրդային Ռուսաստանը Սյունիքը կգիջեր Բաքվին: Այդ ամենից հետո կվտանգվեր Խորհրդային Հայաստանի՝ առանձին միութենական հանրապետություն լինելու հանգամանքը: Լավագույն դեպքում նա պարզապես ինքնավար միավորի կարգավիճակով կընդգրկվեր Այսրկովկասը երկու մասի բաժանած Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների սահմաններում: Այսպիսով՝ հերոսական Սյունիքը ապահովեց հայկական պետական միավորի պահպանման հնարավորությունը ինչպես խորհրդային, այնպես էլ ներկա և ապագա ժամանակների համար: Իսկ Նժդեհի

84 Տե՛ս **Չևորգյան Վ.**, նշվ. աշխ., էջ 177:



գնահատմամբ՝ Սյունիքը լինելով «հոգեկան հրահրիչը Երևանի Փետրուարեան պոռթկումի, պաշտպանութեան եւ փրկութեան կամուրջ հանդիսանալով, **խորհրդային կացնից փրկեց հայ մտաւորականութեանը, սպայութեանը եւ խմբապետութեանը**»<sup>85</sup>:

1921 թ. ապրիլի 2-ից հետո, երբ Երևանից սկսվեց նահանջը, ողջ գաղթականությունը Սյունիքով ուղղվեց դեպի Պարսկաստան: Նման վիթխարածավալ նահանջն ու Արաքսով անցումն անհնարին կլինեին, եթե բացակայեր Ազատ Սյունիքը: Փրկվեց ժամանակի հայ մտավորականության սերունդը, «որը չէ ստեղծում ամիսների եւ տարիների ընթացքում, որի կուրուստը մահացու հարուած պիտի հասցներ հայ ժողովրդին»<sup>86</sup>:

Իսկ եթե վերհիշենք այն ողբերգական փաստը, որ Եղեռնի հետևանքով արևմտահայությունը գրկվել էր մտավորական ներուժի զգալի մասից, ապա վերոնշյալն ավելի է կարևորվում: Եվ հենց Սյունիքի շնորհիվ փրկված մտավորականությունը, սկսած 1920-ականներից, Սփյուռքում խթան դարձավ հայ մշակույթի վերածննդին: Ազատ Սյունիքն ու Նժդեհը փրկիչը եղան ՀՀ քաղաքական-կուսակցական ղեկավարության, որոնք սյունեցու զորեղ բազկի չգոյության դեպքում պետք է արժանանային չեկայի բանտում կացնահարված Համազասպի եղերական ճակատագրին: Ժամանակների հեռավորությունից արդեն ակնհայտ է, որ առանց այդ գործիչների՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքը, առաջին հերթին և գլխավորապես ՀՅԴ գործունեությունը, համապատասխան որակական հենք չէին ունենա:

Բավական է նրանցից նշել մի քանի անուններ, որոնց հետ սերտորեն շաղկապված է Սփյուռքի և ՀՅ Դաշնակցության հետագա ճակատագիրը. Սիմոն Վրացյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Համո Օհանջանյան, Ռուբեն Դարբինյան, Նիկոլ Աղբալյան, Լևոն Շանթ: Որպես ամփոփում՝ «Սիւնիքի հերոսականի շնորհիվ փրկուած են նաեւ Հայաստանի մտաւորականութիւնը, ՀՅ Դաշնակցութիւնը, հայ յեղափոխական եւ մարտական տարրերը»<sup>87</sup>:

Ժամանակին բարձր գնահատելով Լեռնահայաստանի հերոսամարտը՝ ՀՅԴ 1923 թ. Վիեննայի խորհրդաժողովն ընդունեց, որ «Զանգեզուրի ապստամբ շարժումները եւ անոնց շարունակութիւնն ունեցած են արտակարգ նշանակութիւն. Ա. Մեծամասնականները զգաստացնելու, անոնց բռնութեանց եռանդը չափաւորելու, Բ. Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ նահանջող ընկերների, բանակի ու գաղթականութեան թիկունքը ապահովելու եւ անոնց Պարսկաստան անցնելը դիւրացնելու, Գ. Զանգեզուրի ամ-

85 **Նժդեհ Պ.**, Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», Պոսթոն, 1923, N 11, էջ 78:

86 **Նժդեհ Պ.**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», Պոսթոն, 1925, N 8, էջ 80:

87 **Նժդեհ Պ.**, Հատընտիր, էջ 431:

բողջ գաւառը ՀՀ միացնելու, Դ. աշխարհի մէջ մեր հարցի քաղաքական դիրքը ամրացնելու տեսակէտից»<sup>88</sup>:

Այս առթիվ միանգամայն օրինաչափ է նաև փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանի գնահատականը. «Ցեղի ոգու տարերքն էր, որ Նժդեհին Զանգեզուրում դարձրեց հզոր անհատականութիւն»<sup>89</sup>: Հենց նման տեսանկյունից է անհրաժեշտ դիտարկել Լեռնահայաստանի հերոսամարտը: Ծակատագրական պահին գաղափարակիր ղեկավարի դերը միանգամայն վճռորոշ է դառնում, նրա առաջնորդությամբ ռազմիկն անձանաչելիորեն փոխվելով՝ շարժվում է ցեղի անհաղթելիության հրամայականով: Պատմության պարտավորեցնող օրենքն է այդպիսին, քանզի. «Միեւնոյն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է եւ՛ հրաշագործութիւններ կատարել եւ՛ խայտառակօրէն ծունկի գալ հակառակորդի առաջ»<sup>90</sup>:

Եվ օրինաչափ է, որ միայն Նժդեհի նման ղեկավարի սուրն էր ի գորու Սյունիքի հայությանն առաջնորդելու հրաշքի, քանզի հրամայաբար դա էր վտանգալից ժամանակի պահանջը: Ուստի անդրադառնալով Լեռնահայաստանի հերոսամարտի նշանակությանը՝ Նժդեհը հետևյալ գնահատականն է տվել. «Պատմութիւնը չէր ների մեզ, եթէ, խոստովանելով մեր անկարողութիւնը՝ փոքրագաբար հրաժարուինք ինքնապաշտպանութիւնից: 1918–20 թթ. նման արարքը հաւասարագօր կլինէր ինքնապանութեան: Զանգեզուրի ինքնապաշտպանութիւնը մեծագոյն բարոյական արիութեան գործ էր: Հայաստանից Զանգեզուրի խլումը, երբ Կարս, Սարիղամիշ, Իգդիր, Արդահան ամրութիւնները գտնուում էին Թուրքիայի սահմաններում, հայութեան համար մեծագոյն ողբերգութիւն կլինէր»<sup>91</sup>:

**Նկատի ունենալով Լեռնահայաստանի գոյամարտի պատմության արդիականությունը՝ այսօր պարտավոր ենք նրանից համապատասխան դասեր քաղել և անհրաժեշտ հետևություններ անել...**

**Ավագ Ա. Հարությունյան** - գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի և հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնահարցերը:

Էլ. հասցե – avag.harutyunyan@yandex.com

88 Քիրոզեան Յ., նշվ. աշխ., էջ 74:

89 Նժդեհ Պ., Ցեղի ոգու շարժը, էջ 4:

90 Նժդեհ Պ., Հատընտիր, էջ 42:

91 «Հանրապետական» ամսագիր, Եր., 1996, N 11:

## GAREGIN NZHDEH AND THE HEROIC BATTLE OF MOUNTAINOUS ARMENIA

A retrospective view from a distance of 100 years

Avag A. Harutyunyan

*Candidate of Sciences in History*

A century after the heroic battle of Mountainous Armenia, in the conditions of the current dangerous military-political developments around Syunik, the revelation of its heroic history and the assessment of Garegin Nzhdeh's role in that context are of great actual importance.

In Syunik-Artsakh, Great Britain especially stood out with its anti-Armenian policy. The vision of British policy was first and foremost to implement far-reaching anti-Russian programs. In order to solve this priority problem, it was in their interests to expand the territory of the Republic of Armenia including the Kars province, and with the donation of Syunik-Artsakh, to more strengthen Azerbaijan against Soviet Russia.

Syunik, led by Nzhdeh, struggled without even breathing: in the conditions of the military-political blockade, many enemies came and went, the events had changeable ups and downs and with some refluxes, Mountainous Armenia withstood. Nzhdeh acted not only as a military commander in Syunik, but also as an ideological leader and organizer.

Fighting in and for Syunik, from strategic perspective Nzhdeh had always kept in his field of vision the collective interests of the statehood of entire Armenia and the Armenians. If the Armenians of Syunik had not fought heroically under Nzhdeh, the safe existence of the Republic of Armenia in the Azeri-Bolshevik hostile tongs would have been greatly questioned, and later Soviet Russia would have ceded Syunik to Baku. After that, the circumstance of Soviet Armenia to be a separate union republic would be endangered. At best, it would simply be included as an autonomous entity within the borders of the Soviet republics of Georgia and Azerbaijan, which would divide the Cis-Caucasus into two parts. Thus, the heroic Syunik ensured the possibility of preserving the Armenian state entity for both the Soviet and the present and future times.

Given the current resonance of the history of the heroic battle of Mountainous Armenia, today we must learn the relevant lessons and draw necessary conclusions.

Резюме

## **ГАРЕГИН НЖДЕ И ГЕРОИЧЕСКАЯ БОРЬБА ГОРНОЙ АРМЕНИИ**

Ретроспективный взгляд со 100-летнего расстояния

Авак А. Арутюнян

*Канд. ист. наук*

Ключевые слова - Гарегин Нжде, Горная Армения, Великобритания, Арсен Шахмазян, Давидбековские роты, Капаргохт, Февральское восстание, переговоры в Риге, Красная армия, народный предводитель.

Исследование истории Горной Армении и оценка роли Гарегина Нжде в невиданной эпопее 1919-1921 гг. имеют важное значение в свете происходящих сегодня вокруг Сюника опасных военно-политических катаклизмов.

После восстановления независимости Армении в 1918 году, в Сюник-Арцахе своей антиармянской политикой особо выделялась Великобритания. Британское видение было обусловлено далеко идущими антирусскими стратегическими приоритетами. Для решения этой первостепенной задачи, в британские интересы входило расширение территории Республики Армения путем присоединения к ней Карсской области, и, одновременно,- передача Сюник-Арцах Азербайджану с целью повышения его сопротивляемости Советской России.

Сюник под предводительством Гарегина Нжде боролся до последнего дыхания; враги чередовались в условиях динамично изменяющейся военной обстановки, и тем не менее Горная Армения смогла выстоять. Нжде выступал в Сюнике не только как военачальник, но и как идейный предводитель и организатор. Сражаясь за Сюник, Нжде, со стратегической точки зрения, отстаивал интересы армянской государственности и всего армянства.

Если бы под руководством Гарегина Нжде армяне Сюника не сражались бы так героически и не победили бы в неравной борьбе, то безопасное существование Республики Армения во вражеских азеро-большевистских клещах оказалось бы под большим вопросом. А впоследствии Советская Россия уступила бы Советскому Азербайджану и Сюник. После этого и вовсе под угрозой оказалось бы и существование Советской Армении как отдельной республики. В лучшем случае она, в статусе автономной единицы,

оказалась бы в составе одной из двух разделивших Закавказье на две части советских республик - Грузии или Азербайджана.

Таким образом героический Сюник обеспечил возможность сохранения армянской государственной единицы как в советское время, так и в настоящем и будущем.

Вспоминая историю героической борьбы за Горную Армению, сегодня мы обязаны учитывать актуальность ее уроков и делать необходимые выводы.

## REFERENCES

1. Arnot girk', Goris, 1921 (in Armenian).
2. Awō, Nzhdeh, Pēyruť, 1968 (in Armenian).
3. "Ayg", T'avriz, 1920, N 41 (in Armenian).
4. "Azat Hayastan", Er., 1921, marti 9 (in Armenian).
5. Azat Siwnik', Gōris, 1921 (in Armenian).
6. Gevorgyan V., Leṛnahayastani herosamartē, Er., 1991 (in Armenian).
7. "Hanrapetakan" amsagir, Er., 1996, N 11 (in Armenian).
8. Haruťyunyan A., Garegin Nzhdehi 1921 t'. T'avrizi datavaruťyunē, Er., 2004 (in Armenian).
9. Haruťyunyan A., Riḡayi 1921 t'. HYD-RK(b)K banakts'utuťyunnerē khorhrdayin gaghtni p'astat'ght'erum, "Vēm", 2012, N 1 (in Armenian).
10. Hayastani azgayin arkhiv (HAA) (in Armenian).
11. Irazek Y., Mōtik ants'ealits', Pēyruť, 1956 (in Armenian).
12. Khmbapet Martiros Abrahamean, Im yisheli yusherē, T'ehran, 1978 (in Armenian).
13. K'iwrk'chean Y., Uruagits HYD Patmut'ean 1919-1924 hngameak, At'enk', 1988 (in Armenian).
14. Nzhdeh G., Azat Siwnik', "Hayrenik'", 1925, N 8 (in Armenian).
15. Nzhdeh G., Azat Siwnik', "Hayrenik'", 1925, N 10 (in Armenian).
16. Nzhdeh G., Ėjer Leṛnahayastani goyamartēn, "Hayrenik'", 1924, N 3 (in Armenian).
17. Nzhdeh G., Hatēntir, Er., 2006 (in Armenian).
18. Nzhdeh G., Hay-bōlshewikean křiwnerē, "Hayrenik'", 1923, N 12 (in Armenian).
19. Nzhdeh G., Inch'u payk'arets' Leṛnahayastanē, "Hayrenik'", 1923, N 8 (in Armenian).
20. Nzhdeh G., Leṛnahayastani goyamartē, "Hayrenik'", 1923, N 11 (in Armenian).
21. Nzhdeh G., Ts'eghi Ogu sharzhē, Sofia, 1932, (in Armenian).
22. "Siwnik'", Goris, 1920, N 7 (in Armenian).
23. Yushamatean Nersēs Ark'episkopos Melik'-T'angeani, T'ehran, 1968 (in Armenian).

**Հայերեն**

**Աղաջանյան Սերգեյ Ա.**, Մշակույթի տեսություն, Եր., «Քուփի Փրինթ», 2021, 358 էջ:

**Բրուտեան Վաչէ.**, Երկիրը արտերկրէն (Յօդուածներու ժողովածու), Եր., «Լուսակն», 2021, 392 էջ:

Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակ. Գիտաժողովի նիւթեր (21-23-Մարտ 2018), Անթիլիաս, Կաթողիկոսութեան հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 2021, 574 էջ:

**Հովհաննիսյան Լիլիթ Հր.**, Հայկական հարցի 1915-1923 թթ. պատմության հիմնահարցերի լուսաբանումը հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2015 թթ.), գիտ. խմբ. **Գ. Գ. Մախմուրյան**, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստ., 2020, 384 էջ:

**Մելքոնյան Ա. Ա.**, Պատմագիտական հետազոտություններ, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2021, 489 էջ:

Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում, պատասխանատու խմբագիրներ՝ **Հարությունյան Գ. Գ., Տեր Արարատ քահանա** և ուրիշներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն, 2020, 940+44 ներդիր էջ:

**Անգլերեն**

Armenia in Documents of the U.S. Department of State, 1917-1920 /Compiled and transl. By **Gayane G. Makhmourian**. Ed. **V.R. Aglyan**, Yerevan, Institute of History NAS of Armenia, 2020, 560 p.

**Ռուսերեն**

**Тунян В. Г.**, Фальсификации истории Армянского вопроса и Геноцида армян в западной историографии. Конец XXв. - начало XXIв., Ер., Институт истории НАА РА, 2020, 172 с.

*Վէճ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 2 (74), ապրիլ-հունիս, 2021*